Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հայտարարում է 2024-2025 ուսումնական տարվա պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ, առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելություն հետևյալ մասնագիտություններով.

Դասիչ	Մասնագիտություն	Տեղ
Ը.00.01	Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն	1
Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում	2
Ը.00.03	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում	1
Ը.00.06	Միջազգային տնտեսագիտություն	1
Ը.00.08	Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում	1
	Ընդամենը	6

ՀՊՏՀ-ն հայտարարում է նաև 2024-2025 ուսումնական տարվա առկա ուսուցման վճարովի հիմունքներով ասպիրանտուրայի ընդունելություն բոլոր մասնագիտությունների գծով:

Վճարովի հիմունքներով առկա ուսուցման ասպիրանտուրայի տարեկան ուսման վարձը կազմում է 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Փաստաթղթերն ընդունվում են 27.05.2024թ.-ից մինչև 20.06.2024թ.:

Ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթեր.

1) Դիմում ՀՊՏՀ ռեկտորի անունով:

2) Բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմների ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):

3) Օտար լեզվի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ):

4) Ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում:

5) Ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3x4 չափսի):

6) Քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

Հասցե՝ ք. Երևան 0025, Նալբանդյան 128, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ասպիրանտուրայի բաժին:

Հեռախոս՝ +374 10593454